

շանիկի օրերուն սկսած պէտք է ըլլայ: Մինչ անկէ առաջ վրաց արքունական տան եպիսկոպոսին խնամքին յանձնուած էր Մաշտոցի ձեռքով: Յուրտաւի եպիսկոպոսները հայ կամ վրացի էին, քանի որ երկու ժողովուրդները հոն միասին կը բնակէին. բայց ամէն պարագայի անոնք հայերէնի լատենոգրակ էին, քանի որ ի հայս ուսեալ գիտունիք եւ վարդապետք էին: Աս ալ կու գայ հաստատելու ինչ որ ենթադրեցինք թէ Մաշտոց հոս հայ դը-

պրոցներ հիմնեց հայերէն լեզուն սորվեցնելու համար:

Մաշտոց իր առաքելութիւնը ամբողջացնելէ ետք՝ հայրենիք վերադարձաւ, եւ իր «Մտերմական ողջոյնը տուաւ Ս. Սահակին եւ ըսլոր պատահողներուն, ու պատմեց անոնց այդ զործերու մասին ալ»:

(Շար. 6)

Հ. ՊՕՂՈՍ ԱՆԱՆԵԱՆ

ՀԱՅԿԱՆԱՅ ՄՇԱԿՈՅԹԸ

ԵՒ

ԺԹ. ԴԱՐԻ ՄԻ ԱՆՅԱՅՏ ՁԵՌԱԳԻՐ ՏԱՂԱՐԱՆ

(17-20րդ դար)

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1965, ք. 1-3, էջ 24)

Ե.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆԸ

17-19րդ դարաշրջաններում Հնդկաստանի հայաբնակ կենտրոնական քաղաքներում, զլխաւորապէս Կալկաթայում, Բոմբէյում եւ Մադրասում, հրապարակ են գալիս ժողովրդական տաղասացներ ու երգիչներ, որոնք յօրինում են դուռնադեղ երգեր ու տաղեր, որոնց հեղինակները, սակայն, այսօր մեծ մասամբ յայտնի չեն: Ահա այդ երգերի հական մասերն ամփոփուած են մեր յայտնարեւած ձեռագիր մատենում, որոնք իրենց նիւթերով ու բովանդակութեամբ բազմազան են եւ բազմաբան: Այնտեղ կարգում էք սիրային, հարսանեկան, ուրախութեան, երգիծական, կենցաղային եւ այլ երգեր ու տաղեր, որոնք պատկերում են Հնդկաստանի շէր, որոնք պատկերում են հայութեան եւ Նոր-Ջուղայի տարազիր հասարական ասպրումներն ու մտորումները, քնարական ասպրումներն ու տրանս հոգեկան յոյզերը, խոհերն ու տրամագրութիւնները. կան նաեւ ժամանակի ժողովրդի վարքն ու կենցաղը նկարագրող տաղեր:

Գեղարուեստական տեսակէտից այդ երգերն ու տաղերը շատ պարզ են, բայց իրենց ներքին կառուցուածքով պատկերաւոր են եւ զբաւելի իրենց անկեղծութեամբ եւ զգացումների ջերմութեամբ:

Այդ բանահիւսութեան հիմնական դժեւրեց մէկը հարուստ բովանդակութիւնն է,

ուր հնդկահայ եւ ջուղահայ ժողովուրդը պատկերաւոր արտայայտութիւններով երգել է ո'չ միայն իր սիրային տպումները, այլեւ սրամիտ բովանդակութեամբ ստեղծագործութեան նիւթ է դարձրել բնատանկան կեանքի եւ ժամանակի կերպարանները: Երբեք ու պակասաւոր կողմերը: Երբեք թերի ու պակասաւոր կողմերը: Երբեք է նաեւ աշխարհի եւ հարստութեան ունայնութիւնը: Թերեւս այդ հական ունայնութիւնը պիտի բացատրել, որ երգերից ու տաղերից շատերն իրենց ժամանակին մեծ ժողովրդականութիւն են վայելել, ունեցել են երաժշտական եղանակներ եւ երգուել են տօնական հանդէսներում, խնջոյքներում, հարսանիքներում, ընդհանրապէս մէջ վառ են պահել ժողովրդական բանահիւսութեան սէրը:

Երգերն ու տաղերը գրուած են գրաւորապէս աշխարհաբար լեզուների ներդաշնակ երանգաւորումներով, և որը հազաւոր Նոր-Ջուղայի բարբառն է, որոշ տղերում մի քանի հնդիկ եւ անգլիերէն բառերով:

Այնտեղ տեսնում էք հնդկահայ եւ ջուղահայ ժողովրդի բանաստեղծական ձիրքը, զեղարուեստական ճաշակը, զբանական սրամտութիւնը, լեզուական ու ոճական արուեստը, բարբառային գեղեցկութիւնները եւ այլ ուշադրաւ երեւոյթներ:

Անժխտելի է, որ Հնդկաստանի եւ Նոր-Ջուղայի տարազիր հայութեան պատմութեան որոշ հական էջերի մասին գաղափար կազմելու համար անհրաժեշտ է ու-

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՆԱԽՆԵԱՅ

ԳՐԻԳՈՐԻՍԻ ԱՐՇԱՐՈՒՆԻՈՅ
ՔՈՐԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՅ

ՀԱՅԿ. ՄԱՏԵՆԱՇԱՐ ԳԱԼՈՒՍՏ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

Աշխատասիրութեամբ

Հ. ՔԵՐՈՎԻԷ Վ. ՉՐԱՔԵԱՆԻ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ (էջ 1-81) - Գրիգորիս Արշարունի - վահան Պատրիկ Կամսարական - Ձեռագիր - Առաջաւորաց - Քառասնորդաց Պախի Բովանդակութիւն Մեկնութեան:

ԲՆԱԳԻՐ (էջ 83-215) - ՅԱՆԿ ՆԻԻԹՈՅ (էջ 217-220)
ՅԱՆԿ Ս. ԳՐԻԳՐԻ ՎԿԱՅՈՒԹԵԱՆՅ (էջ 221-223)

սովետական լեզուները, որոնցից շատերը, սակայն, մինչև օրս էլ բանասեր - բանահավաքների ուշադրության չեն արժանացել եւ առանձին գրքով չեն հրատարակուել:

Այժմ ծանոթանանք ժողովրդական բանահավաքության այդ անտիպ փշրանքների հետ:

1. Սիրային երգեր: Ձեռագիր տաղաբանը զարգարող հնդկահայ եւ ջուղահայ ժողովրդական երգերի ու տաղերի մէջ գեղեցիկ կառուցուածք եւ առանձին գրաւորութիւն ունեն սիրային երգերը: Այդ քնարական տաղերից մէկում ժողովրդական շնորհալի երգիչը պատկերել է իր սիրատուին սրտի ջերմ, անկեղծ ապրումներն աշխարհի զծագրութեամբ եւ ժողովրդին հասկանալի լեզուով:

«Սիրահարեալ եմ քո սիրով,
Սիրտս կիզեալ ուժգին բոցով.
Ես սիրոյ քոյ մնամ լալով,
Մի՛ մոռնար իմ սիրելի:

Զարթնում ի քնոյ՝ առ քեզ կարգամ,
Համայն սրտի կեալդ ցանկամ.
Զի տեսից քեզ յամենայն ժամ,
Մի՛ մոռնար իմ սիրելի:

Ի խաւարեմ արեգակամ,
Ոչ դադարէ սէրն իմ այնքամ.
Զի նմանից անդորրութեամբ,
Մի՛ մոռնար իմ սիրելի:

Է՛ր ես այնքան խոտաւորտ լեալ,
Երբեք չկամիլդ ինձ ողորմալ.
Սէրն իմ, սէրն իմ կեանքս է, աւա՛ղ,
Մի՛ մոռնար իմ սիրելի:

Հնդկահայ եւ ջուղահայ բանահավաքութեան ժողովրդական վրձինը գծել է սիրային բանաստեղծութեան ա՛յլ գեղեցիկութիւններ, որոնցից ուշադրաւ է նախընտրուել խորագրով ոտանաւորը, որի կառուցողական արուեստի պարզութիւնը, զգացմունքի անկեղծութիւնը եւ նոր-ձուլութիւն են տալիս ոտանաւորի բովանդակութեանը: Ունի երաժշտական սիրուն եղանակ: Ահա բանաստեղծութեան լրիւ պատկերը:

«Սիրով հարցուր նաշխուն բլրով,
Կարօտ ամ ես կնկուղ վարդիդ.
Տարբերութիւնս ինձի բռնեց,
Սիրելուցս ինձ բաժանեց:

Նման տատրակիս ես դարձայ,
Վարդիդ վերէն ես շիւացայ.
Զահել աս դու խաբուր ջանի,
Քո սէրն ինձ կու ըսպանի:

Աղաչանք ի քեզ խնդրեմ,
Զբողուս զիս կարօտ մեռնեմ.
Զվան ումբըս յանց ա կալման,
Ես ամ քո հեշտեցն լալման:

Նուր ա եմ քո տեսած գարշեմ,
Զորաման ա այգուտ վարդեմ.
Զարմանալի է մեր սէրն,
Մշտապէս ի քո ընկերքն:

Բոպէ-բոպէ ես կու խնդրեմ,
Որ սիրելուս ուրախ տեսնեմ.
Մոմերով սիրտս վարած ա,
Քո խօսքերն սիրուն քար ա»:

Սիրային բանաստեղծութեան մի ա՛յլ ուշադրաւ ստեղծագործութիւն է «Շրջէ՛ր անհանդիստ» ոտանաւորը. դա պարզ, բայց խորն ապրումներով հիւսուած մի զուարթիկ տաղ է, որի մէջ ժողովրդական երգիչը պատկերում է իր սիրատուին սիրտն աշխարհի զծագրութեամբ:

«Ի մէջ նանայարիի տե՛ս քո սիրածի հալն,
Որպէս շրջէր անհանգիստ վասն քո՛ւ քաղցր տեսուն.
Նայի՛ր, քո սիրելոյն սիրոյդ է միշտ գարբուն,
Ողբալով խնդրում է վասն քո՛ւ քաղցր տեսուն:

Աղորդ որ քահէլ աս դու ինձ կարօտ պահում աս,
Մին դու մտածում չես քէ աշխարհս ո՛ւմ կը մնայ:
Աւա՛ղ, օրըս էհաս խեղճ եւ ողբով մնացի,
Վասն քո՛ւ քաղցր տեսուն այժմս կարօտ մնացի:

Մարդոյս կեանքն է վայրի ի մէջ ունայն աշխարհի.
Միայն քէ կը մնայ քո սէրն ինձ յիշելի...»:

Հնդկահայ ժողովրդական բանահավաքութեան սիրերգներից ուշադրութեան արժանի է նաեւ «Քո ձեռն չի ընկաման» խորագրով նոր-ձուլայի բարբառով գրուած ոտանաւորը, ուր երգիչը դիմում է իր «սիրելի, նազելի» ետրին եւ պատմում իր սիրակարօտ սրտի յոյգերն ու ապրումները եւ խնդրում է ամուսնանալ: Ոտանա-

ւորի իւրաքանչիւր տան ճրգ տողն ունի երգիծական երանգ: Տաղի մի ա՛յլ գեղեցիկութիւնը գրաւիչ եւ գեղեկան եղանակն է. երգուել է տօնական խնջոյքներում, հանդէսներում եւ հարսանիքներում, ինչպէս վկայում են ոտանաւորի վերջին տան բառերը. «Այս խաղս ձայնով ասէ՛ք»: Ահա տաղի ընդհանուր պատկերը:

«Դամ եւ պատմեմ իմ անցն, քէ որպէս ա իմ ցանքն,
Ա՛յ ջվան, պատմեմ ինձ, որ իմանամ քո կամքն.

Ո՛վ սիրելի, իմ նազելի, դու ես նրման վարդի,
Սիրելի՛, մի՛ տրտմել, մի՛ խորհել վատ կամքի.
Շիւ, շիւ, շիւ, ա՛յ շիւ, շիւ, քո ձեռն չի ընկաման:

Ես ոչ ունեմ շատ կամքն, քէ ոչ միայն սէր եւ փառքն,
Ամաչման ամ քեզ ասել, իմ կամքն քեզ պատմել.
Ասա՛ դու իմ սիրելի, մի՛ ամանջել պատմելի,
Կամքիդ պէս կամիմ երբալ, քո ձեռն չի ընկաման.

Շիւ, շիւ, եւայլն:

Ուրախ սրտիւ ուրախանամք, ես եւ դու ամուսնանամք,
Ես կ'ընդունեմ քո կամքին, բայց սպասեմ ծնողիս հրամանին(*).

Ես կ'երբամ կը խնդրեմ, մեր սէրն կը կատարեմ,
Տէ գնայ շուտ արա՛ւ, եկ ինձ էլ ուրախ արա՛ւ.
Շիւ, շիւ, եւայլն:

Ծառայ եմ քեզ սիրելի, ծնողիս հրաման քերի,
Բարի նախապարի պատուելի, խօսքդ լինի հանելի.
Բարով քեզ իմ ցանկալի, քերի հրաման ցնծալի,
Յնծացայ ես քո խօսքին, քո բերած ուրախ լուրին,

Շիւ, շիւ, եւայլն:

Սպասեմ սէր մին պաշին, իմ բերած ուրախ լուրին,
Զեմ խնայում քո խօսքին, ա՛յ ինձ քոյ միմ պաշին.
Քո պաշն ինձ ավղալ շինեց, քո սէրն սիրտս վառեց,
Քէ մեր սէրն հաստատ ա, ուրախ կեանք մեզ հա-

մար ա.
Շիւ, շիւ, եւայլն:

Ե՛կ գնամք եկեղեցին, հնազանդեմք մեր օրէնքին,
Տէր աս դու դարձել ինձ, դուր խաբար աս, արա՛ ինձ,
Շնորհաւոր լինի մեզ, Աստուած պաշի հաստատ քեզ,
Այս խաղս ձայնով ասէ՛ք, վերայինքն իմացէ՛ք.

Շիւ, շիւ, եւայլն:

Ահա մի ա՛յլ գեղեցիկ սիրերգ, ուր ժողովրդական երգիչը դիմում է իր սիրելիին ետրին եւ զուրադեղ երանգաւորում ներով պատկերում իր ջերմ, անկեղծ սիրտը սէրը եւ հոգեկան ծանր ապրումները:

Ներք: Ոտանաւորի առաջին տողերի տառերը վկայում են, որ հեղինակն է Յովհաննէս մէկն իր ժամանակի բանաստեղծական ձիրքով օժտուած երգիչներից, որոնք իրենց յօրինած երգերով հարստացրել են հնդկահայ եւ ջուղահայ բանաստեղծութեան դանձարանը: Ոտանաւորի լեզուն նոր-ձուլայի բարբառն է, որ ներկայացնում է հետեւեալ պատկերը:

«Յատկապէս քեզի սիրել ամ,
Սիրովդ յոյժ խորովել ամ.
Ունեմ սէր քո սրտին հարցո՛ւ,
Ուրախ դէմքդ առ ինձ դարձո՛ւ:

Վասն էր աս պահում ինձ լալով,
Վաղայ ունեմ երկու տարով.
Հարաս լուս դէմքդ գաղում աս,
Հայիքի մէջ սրտիս դաղում աս:

Անման տեսո՛ք ես փէրի,
Աչքերիդ ելէ՛ր ամ գերի.
Նազովդ ինձի երում աս,
Նաան ծառ սրտիս տիրում աս:

Իս ցարքն ինձի հարաս ա,
Շրքունեք լաւ գինոյ քաս ա.
Սիրակա՛ն, սիրով անման,
Սիրոյդ ծով ընկայ քիզուման:

Յատկապէս քեզ որ տեսման ամ,
Ծածուկ սիրով տապալման ամ.
Նարգիզդ հոգիս կու հանէ,
Նոր սիրտդդ առիւմ կընկանէ:

Է՛ր գալմ, սէր ունես, ասա՛,
Շրքունեք լաւ գինոյ քաս ա.
Ա՛յ անիրաւ, չում չես ասում,
Սիրելոյդ կարօտ աս պահում:

Բայտարար դէմքդ երբ գաղում աս,
Սրտիս մէջն դու դաղում աս.
Իմ քաղցրիկ սէր կամքդ ասա՛,
Սիրելոյդ վերայ աղորմայ:

Սիրոյդ յէշտեմ ելայ գերի,
Ասա՛ սէր քո ինձ սիրելի.
Մոռաման չեմ ես քո սէրն,
Ում ասեմ ես իմ դարդերն:

*) Դա այն ժամանակաշրջանն է, երբ սիրող զուգերը կարող էին ամուսնանալ միայն իրենց ծնողների համաձայնութեամբ եւ թոյլտուութեամբ:

Ձախ չի գրնաման քո բան,,
Մարիամ ցաւդ չի իմաման.
Կը կանչի քեզ Սահրադ քանն,
Դու գնաս հարսի դուրքանն:

Ղալադ բանէր որ արարիր,
Դատարկութիւնդ փախուցիր.
Աղջկան փողովդ խաբեցիր,
Էդ խաբածիդ երկիւղ կրիր:

Ճերմակ բեղերդ դո՛ր գաղեցիր,
Հարսի աչքերն կապեցիր.
Մքնով պսակըն արարիր,
Քեզ ջալդ խառնից փրկեցիր:

Մոռաման չենք մենք էս դաղէն,
Ջալդ կանչեցիր Յակոբ աղէն,
Վզից կապեցիր դու շալէն,
Խէր չես տեսնելէդ էդ բաղէն:

Յորոգայք դու սահմանեցիր,
Ջումիաքին չը կանչեցիր.
Մին ճար արա՛ շուտով փրկվիր,
Որ չնկանես դու քաղիր:

Նմանութիւնդ հարկիդ չկայ,
Բագումբ բանիսան վկայ.
Ձփոշմանես որ ճար չկայ,
Կուշտդ կապել ան դուշալայ:

Շարմաւղայ ելան ջվանանին,
Էնտոնք որ դեռ պսակուել չեն.
Էս ալեւորն ածեց կին,
Ուրեմն դեռ իմացել չեն:

Ում պատմեմ ես էս բանն,
Թագաւորեց նստաւ տանն.
Էն հալեւոր Սահրադ խանն,
Դո՛ր ջալդատի արար բանն:

Ձէր նման քեզ էդ աղջիկն,
Թէ ժամանակըն քաշէր ճիւփ.
Ձեռնիցդ կ'առնին էդ աղջիկն,
Պիտէր քաշիր դու տիփն:

Պատմութիւնս վերջաման չի,
Էս դո՛ր բանայ գլխըման չի.
Մգամ Սահրադն իմաման չի՛,
Որ կապողին շալ խալատի:

Ջանք արար չուր բերեց տունն,
Ջալդ կանչեց Յակոբ Պտուռն.
Ասաց՝ օգնիր ինձ էս բանումն,
Ընդունիր խաչադէրութիւնն:

Ռանկդ նարմակէց դոր չունամ,
Մինչեւ տէրտէրն պրծաւ իւր բան.
Շգուր արարիր Մարիամին,
Ձննի քէ հանեն քո ջանն:

Սիրածդ խօջ շատ մահէլ ա,
Էդ մին մահէլի լայեղ ա.
Հալեւորէրին դեղ ա,
Ջվանանուն շատ համեղ ա:

Վարքդ տպելէ արժան ա,
Որ պարծանք ա Հնդստանայ.
Հալեւորըն ջվանանայ,
Հնարքով Հնդստանայ:

Տարակուսած նստիր մէջլիսն,
Էշխով կարիր ասուլիսն.
Գարունն էր քո քարիփն,
Դեռ չէր լսել էդ հարիփն:

Բամբ արարեալ քաջուր ելան,
Արարումնսիդ հիացել ան.
Ծերունի քեզ համարել ան,
Դիրուր եկիր՝ դոր ջահէլաս:

Յաւօք լցած իր, ո՛վ տիկ,
Նեգճեցիր դու շրփիփ.
Արարիր դու տրփիփ
Ձուր մնաց քեզ ջահէլ աղջիկ:

Իւծեալ դիմօք միշտ նստած իր,
Գիշեր ցերեկ աղօթք կանիր.
Հարցի զանգին ժամ կգնիր
Վասն հարսին գալ կաղաչիր:

Փափաքման էր մինչեւ եկաւ,
Երեսն պաչեց, տունն տարաւ.
Դռներն եւ ջանէլըն բացաւ,
Հարսի կշտին պայծառացաւ:

Քարոգում իր դու Մարիամին,
Որ այլոց հետ ապեա չարէր.
Ձննի տանիցդ փախի դուս,
Եւէլ չքանի քեզի յոյս:

3. Ընկերային մօտիւններ: Հնդկահայ
բանահիւսութեան մէջ ուշադրաւ մի երե-
ւոյթ է Կալիլթայում ապրող հայ հա-
րուստի եւ չքաւորի ընտանեկան կեանքի
պատկերը: Անյայտ երգիչը վերլուծելով
ժողովրդի տնտեսական դրութեան խիստ
հակադրութիւնը, եկել է այն եզրակա-
ցութեան, որ աղքատի, չունեւորի եւ չը-
քաւորի տունը սիրոյ եւ միաբանութեան

«բունն» է, իսկ հարուստն ո՛չ «նասիր»
ունի, ո՛չ սրտակից, ո՛չ բարեկամ եւ ո՛չ
էլ հաւատարիմ ընկեր: «Սաստիկ փողա-
պաշտութիւնը» մեծահարուստի իրէջան
է. այդ ունեւորներն «անիրաւ» են, «ան-
սղորմ», «նամարդ» եւ «խիստ անբան»,
«անհայր» կանայք «անմիաբան» են: Ա-
յսի նրանց կանայք «անմիաբան» են: Ա-
յսի տխուր պատկերն այն է, որ հա-
րուստներն ո՛չ միայն «առաւօտէն մինչ ի
գիշեր յիրար» մահն են ցանկանում, այլ
եւ «իրենց աղբին վատ ցանկանալով»
զրկուած են երջանկութեան բարիքից:
Նրանք այնքան աղաւ են եւ փողապաշտ,
որ աշխատում են «յեթան» առնել եւ թանկ
ծախել. նոյնպէս աշխատում են «յիրար
զրկել» եւ իրար բամբասել: Երգիչը պատ-
կերելով հնդկահայ հարուստ դասի ըն-
տանեկան կեանքի եւ տիրակի կերպարների
տանեկան կեանքի եւ տիրակի կերպարների
ընդհանրութեան նկարագրի եւ կենցաղի
նրանց բարոյական նկարագրի եւ յոռի, ա-
րացասական յատկանիւններն ու յոռի, ա-
րարքներն այսպիսի դժադրութեամբ.

«Արի՛ սիրով եւ միաբանութեամբ գնամք մեր տունն,
Ո՛չ քէ արժանաւոր տունն՝ երէ ոչ՝ մեր աղքատ
Ո՛չ քէ արժանաւոր տունն, նստիք չունի, [բունն.
Ո՛վ տուն ունի, նստիք չունի.
Լաւ ուտել էլ ըշտայ չունի.
Ո՛չ սրտակից, ո՛չ բարեկամ,
Եւ ոչ հաւատարիմ ընտանի:

Արի՛ սիրով եւ միաբանութեամբ, եւ այլն.
Այնպիսեաց հոգին եւ միտք,
Եւ վայելչական բնութիւն,
Անիրաւ եւ անողորմ,
Եւ սաստիկ փողապաշտութիւն:

Արի՛ սիրով եւ միաբանութեամբ, եւ այլն.
Ոմանք դրամ եւ ոմանք շուն,
Եւ ոմանք շնորհաբանութիւն.
Եւ ոմանք անարդ եւ խիստ անբան,
Նոքա նամարդ եւ խիստ անբան:

Արի՛ սիրով եւ միաբանութեամբ, եւ այլն.
Իւրեանց կանայքն անմիաբան:
Արի՛ սիրով եւ միաբանութեամբ, եւ այլն.
Կարօտ ան միջբարութեան,
Եւ պանծալի վայելչութեան.

Արի՛ սիրով եւ միաբանութեամբ, եւ այլն.
Առաւօտէն մինչ ի գիշեր,
Յիրար մեռնելոյ ցանկութեան:
Արի՛ սիրով եւ միաբանութեամբ, եւ այլն.
Նոքա բոլորքն միաբան,
Մտքով եւ սրտով խոստացան,
Իւրեանց ազգին վատ ցանկալով,
Երբեք անարդ եւ անողորմ:

Արի՛ սիրով եւ միաբանութեամբ, եւ այլն.
Յեծան առու եւ քանգ ծախել,
Արի՛ սիրով եւ միաբանութեամբ, եւ այլն.
Արի՛ սիրով եւ միաբանութեամբ, եւ այլն.

Հանդիսաւոր եւ արժանի,
Գործ համարեն եւ բամբասել:
Արի՛ սիրով եւ միաբանութեամբ, եւ այլն.
Վայելուչ է նոցա ասել,
Թէ չեն զանազան միմեանցէն.
Ձի այս շունն ի յայն
Եւ բոլորքն ի մի տանէն:

Արի՛ սիրով եւ միաբանութեամբ, եւ այլն.
Խղճուկ Բակոբն լաւ կարի,
Յիրկար պահի իւր տիկինն,
Էն դօլն որ իւրեանց վզինն:

Արի՛ սիրով եւ միաբանութեամբ, եւ այլն.
Լաւ ծանօթ են ինկիլգանին,
Իւրեանց համարալին չարն եւ բարին.
Սպասում ան աչքեր չոսած,
Նետն ի ձեռնին՝ լաւ շփարին:

Արի՛ սիրով եւ միաբանութեամբ, եւ այլն.
Ջանս մաշվեց հոգս առնելով,
Վասն իմ աղտոտ պատկերն.
Ձեռ չեն վերման իմ ջանիցն,
Էս իմ պարտատէր շներն:

4. Իմաստասիրական խոհեր: Հնդկա-
թողովրդական բանահիւսութեան մէջ եր-
գիծական զրականութիւնն եւս ունի իր
ուրոյն էջը: Այդ ոտանաւորներից յայտնի
է «Միմոսական երգ»ը, ուր երգիչը գծել
է իր ժամանակի ժողովրդական ուրախ
հանգչիւն – զինու, սաղի, պար ու «մաս-
կերաւոր» պատկերը: Ուրախութեան եւ
կեր ու խմի սեղանի շուրջը համախմբուել
են եղբայրական տարբեր աղջերից հրա-
ւիրեալները – ջնուր, պարսիկ, խախա-
մը, մոլլան, դերձակը, բժիշկը, իսկ հրա-
ւիրեալների սեղաններին փայլ են տալիս
եփած ոչխարը, փէրուն, հէմը, բիւրը,
զինին եւ այլ բարիքներ: Շուտով հնչում
է ճարտարախօս միմոսի բարեմաղթու-
թեան քաղցր ձայնը եւ խաթունանին,
տիկնայք եւ բոլոր հանդիսականները խը-
մում են անուշ զինին եւ վայելում պա-
տաստուած ճոխ, համեղ կերակուրներն
ու բնութեան բարիքները: Ահա ժողովրդ-
ական ուրախ հանգչիւն պատկերող ոտա-
նաւորը.

«Այ ժողովուրդ, զինույ, սաղի,
Ո՛հ, այս գիշեր զարմանալի.
Ինձ իրաւի այնպէս բուի,
Թէ չեմ արքուն, այլ յերազի:

